


«ՀԱՅԵՐԸ՝ ԱՌԱՆՑ ԾԽԱԽՈՏԻ»

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ » | ՀՈԴՎԱԾՆԵՐ | ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ | ԱՆՀԱՏՆԵՐ » | ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ » | ՏՈՆԱՑՈՒՅՑ » | ԱՅԼ »

26/07/2013 "Սփյուռք" ամառային դպրոց, ՀՀ սփյուռքի նախարարություն, Հասարակություն, Գլխավոր,ՈՒշադրության Կենտրոնում No comments

# Հուլիսի 25-ը «Սփյուռք ամառային դպրոցում»



Հուլիսի 25-ը բավականին հագեցած էր «Սփյուռք ամառային դպրոց»-2013 ծրագրի Սփյուռքի լրագրողների դասընթացի մասնակիցների համար:

Առավոտյան «Հայ-թուրքական հարաբերությունների արտացոլումը թուրքական և ադրբեջանական մամուլում»թեմայով դասախոսությամբ հանդես եկավ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանը: Բանախոսը շեշտը դրել էր թուրքական և ադրբեջանական մամուլում հայկական թեմաների անդրադարձին ու փաստերի խեղաթյուրմանը:

Գրեթե նույն թեմայի շարունակությունն էր Մեդիամաքսի գլխավոր խմբագիր. Դավիթ Ալավերդյանիզրույցը «Հայ–ադրբեջանական և հայ-թուրքական տեղեկատվական պատերազմը» թեմայի շրջանակներում:

Այնուհետև սփյուռքի լարագրողների համար շատ հետաքրիր և ուսանելի դասախոսությամբ հանդես եկավ ԵՊՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Միհր Հովհաննիսյանը: Թեման «Հայագիտական արդի մարտահրավերները համացանցում» նյութն էր:

Այնուհետև սլայդ-շոուի օգնությամբ ցույց տրվեցին կենտրոնի կազմած թեմատիկ կայք-էջերը, որոնցից յուրաքանչյուրը անհրաժեշտ տեղեկատվություն կարող է տալ մասնակիցներին: Ինչպես նաև կայքերում կարելի է գտնել, դիտել և անվճար ներբեռնել հայագիտական համապատասխան թեմատիկ ուղղություններին առնչվող ոչ միայն դասական և հայտնի գիտական աշխատանքներ, այլև նոր հրապարակումներ, փաստաթղթեր, քարտեզներ, լուսանկարներ և տեսանյութեր:

Դասախոսությունների շարքն ավարտվեց մասնագիտական շեշտադրությամբ: Հայաստանի հանրային հեռուստատեսության լրագրող Արթուր Գրիգորյանն իր «Լրագրողական վարպետություն» թեմայով մասնակիցներին փոխանցեց մասնագիտական գաղտնիքներ ու հմտություններ:

Այնուհետև ցուցադրվեց ֆիլմ, որտեղ Արցախյան ազատամարտի մասնակիցն իր փորձառությունն էր փոխանցում սերունդներին:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ծաղկաձոր